



JULY - DECEMBER 2019  
ՀՈՒԼԻՍ - ԴԵԿՏԵՄԲԵՐ



# NEWSLETTER ՏԵՂԵԿԱԳԻՐ

---

Հայկական Կարմիր խաչի ընկերություն Armenian  
Red Cross Society  
Հայաստան, Երևան, 0015, Yerevan, Armenia  
Պարոնյան 21/1 Paronyan

[redcross@redcross.am](mailto:redcross@redcross.am)  
[www.redcross.am](http://www.redcross.am)



**ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ՝  
ԿԱՐԿՈՒՏԻՑ ԱՌԱՎԵԼ ՏՈՒԺԱԾ  
ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ**

Շիրակի մարզում 2019թ. հունիսի 27-ին տեղացած ուժեղ կարկուտի հետևանքով առավել տուժած 925 ընտանիք՝ ընդհանուր առմամբ 4606 մարդ, Հայկական Կարմիր խաչի ընկերության (ՀԿԽԸ) կողմից սեպտեմբերին ստացավ մարդասիրական օգնություն՝ դրամական աջակցության տեսքով: Այդ ընտանիքների յուրաքանչյուր անդամ ստացավ 32 575 ՀՀ դրամ (ընդհանուր առմամբ՝ 150 040 450 ՀՀ դրամ):

Աղետից հետո ՀՀ Շիրակի մարզպետարանն իրականացրել էր կարիքների նախնական գնահատում՝ հայտնաբերելու առավել խոցելի՝ բերքի 75 - 100 տոկոսը կորցրած ընտանիքներին: Հայկական Կարմիր խաչի ընկերությունը (ՀԿԽԸ) որպես կառավարությանն աջակցող կառույց մարդասիրական ոլորտում, կարկուտից տուժած բնակչությանն աջակցելու նպատակով միջոցներ հայթայթելու համար համապատասխան ծրագրով դիմեց Կարմիր խաչի և Կարմիր մահիկի ընկերությունների միջազգային ֆեդերացիայի Աղետներին արձագանքման արտակարգ իրավիճակների ֆոնդին և ստացավ դրական արձագանք:

ՀԿԽԸ-ն առավել տուժած ընտանիքների ցուցակները վերջնական ճշգրտել և հստակեցրել է մարզային և տեղական ինքնակառավարման մարմինների հետ սերտ համագործակցությամբ: Դրամական աջակցությունը տրամադրվել է Շիրակ, Հովիտ, Կամո, Բասեն, Ջրառատ, Կառնուտ բնակավայրերի առավել տուժած ընտանիքներին՝ «Հայբիզնեսբանկի» «Գյումրի» և «Անի» մասնաճյուղերի միջոցով:



**HUMANITARIAN AID FOR AFFECTED  
BY HAIL COMMUNITIES**

The most affected by the hail 925 families, 4606 people in total, in Shirak region on June 27, 2019, received financial assistance from the Armenian Red Cross Society (ARCS) in September, 2019. Each member of these families received 32575 AMD (150 040 450 AMD in total).

After the disaster, the Shirak regional administration conducted preliminary needs assessment to identify the most vulnerable families, who lost 75 to 100 percent of the harvest. The Armenian Red Cross Society, as an auxiliary organization to the government in humanitarian field applied to the Emergency Response Funds of the International Federation of Red Cross and Red Crescent Societies to raise funds to support hail-affected populations and received a positive response.

The Armenian Red Cross Society finalized the clarification of the most affected families' lists in close cooperation with regional and local authorities.

Financial assistance was provided to the most affected families of Shirak, Hovit, Kamo, Basen, Jrrat, and Karnut communities, through “Gyumri” and “Ani” branches of “ArbusinessBank”.



**ՀԿԻԸ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ  
ՄԱՍՆԱԿՑԵՑ ԿԻԿՄ  
ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ  
ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԻՆ**

2019թ. դեկտեմբերի 4-ից 12-ը Շվեյցարիայում՝ Ժնևում, տեղի ունեցան Կարմիր խաչի և Կարմիր մահիկի միջազգային շարժման կանոնադրական հանդիպումները, որին մասնակցեց նաև Հայկական Կարմիր խաչի ընկերության պատվիրակությունը: ՀԿԻԸ-ն ներկայացնում էին Գլխավոր քարտուղար Աննա Եղիազարյանը, Միջազգային հարաբերությունների բաժնի վարիչ Մարիանա Հարությունյանը, Լրատվական և լուսաբանման բաժնի վարիչ Նունե Գրիգորյանը: Կանոնադրական հանդիպումների շրջանակներում անցկացվեցին ԿԻՄՖ Գլխավոր ասամբլեան և Կարմիր խաչի և Կարմիր Մահիկի շարժման Պատվիրակների խորհուրդը: Այս տարի ևս ավելի քան 2500 պատվիրակներ և Ազգային 192 ընկերությունների ներկայացուցիչներ հանդիպեցին՝ նշելու իրենց ձեռքբերումները, քննարկելու մարդասիրական խնդիրները և որոշելու հետագա ուղղվարական ուղղությունները:

Համաժողովի բացմանը ներկա գտնվեց նաև ՀՀ Կառավարության պատվիրակությունը՝ ի դեմս ԱԳնախարարի տեղակալ Արտակ Ապիտոնյանի, Շվեյցարիայի Համադաշնությունում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Անդրանիկ Հովհաննիսյանի, դեսպանատան ներկայացուցիչների:

Հայկական Կարմիր խաչի ընկերությունը ստանձնեց Միգրացիայի վերաբերյալ հանձնառությունը, ևս 4 հանձնառություն ստանձնվեց պետության հետ միասին դրանք են՝ «Խթանել կլիմայի փոփոխությանը համահունչ աղետների վերաբերյալ օրենքների ու քաղաքականության ընդունումը, որոնք կապահովեն առավել խոցելի անձանց հասանելիությունը», «Մարդասիրական կրթությունը՝ դիմակայունության համար», «Հանրային առողջության և սոցիալական խնամքի խթանում», «Նպաստել Հայաստանում Առաջին օգնության զարգացմանը, խթանմանը և ինտեգրմանը»:



**ARCS DELEGATION PARTICIPATED IN  
THE STATUTORY MEETINGS OF THE  
INTERNATIONAL RED CROSS AND RED  
CRESCENT MOVEMENT**

On 4 – 12 December, 2019 in Geneva, Switzerland, the Statutory Meetings of the International Movement of Red Cross and Red Crescent took place. The delegation of Armenian Red Cross Society comprised of Dr. Anna Yeghiazaryan, Secretary General, Mariana Harutyunyan, Head of International Affairs Department, Nune Grigoryan, Head of Information and Dissemination Department represented ARCS at the Meetings. In the frames of the Meetings, the IFRC General Assembly and The Council of Delegates of RC/ RC Movement have been organized. The General Assembly meets every two years and is the supreme governing body of the IFRC, where over 2500 delegates and all 192 member National Societies gather to celebrate their achievements, discuss humanitarian challenges and decide on future strategic directions.

RA Government Delegation, comprised of Mr. Artak Apitonyan, Deputy Foreign Minister, Mr. Andranik Hovhannisyanyan, Ambassador Extraordinary and Plenipotentiary of the Republic of Armenia to the Swiss Confederation, representatives of the Embassy attended the Conference.

The Migration pledge has been taken during the Conference by the ARCS, and another four jointly with the Government: “Foster climate-smart disaster laws and policies ensuring that most vulnerable are reached”, “Humanitarian education for resilience, Promoting public health and social care”, “Foster first aid development, promotion and integration in Armenia”.



**ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՏԱՆՁՆԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՏՈՒՆ-ԻՆՏԵՐՆԱՏԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ**

Դեկտեմբերի 19-ին Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ ստորագրված հուշագրի համաձայն Հայկական Կարմիր խաչի ընկերությունը կստանձնի Գյումրու տուն-ինտերնատի կողմից տարեցներին և հաշմանդամություն ունեցող անձանց մատուցվող շուրջօրյա խնամքի իրականացումը:

Այստեղ կներդնենք Կարմիր խաչի Կարմիր մահիկի միջազգային շարժման փորձը, մասնավորապես Շվեյցարական Կարմիր խաչի հետ համագործակցությամբ ձեռք բերված հմտություններն ու փորձառությունը, որի շնորհիվ կբարելավենք տուն-ինտերնատում բնակվող խնամքի կարիք ունեցող տարեցների և հաշմանդամություն ունեցող անձանց կյանքի որակը: Այդ թվում՝ կբարելավվեն շենքային պայմանները, կներդրվի ակտիվ երկարակեցության բաղադրիչը, կապեր կստեղծենք Շիրակի մարզում արդեն իսկ գործող տարեցներից կազմված տասը համայնքային նախաձեռնող խմբերի հետ, ինչը կնպաստի սոցիալիզացիային և համայնքային կյանքում ընդգրկվելուն:

Բացի այդ նախատեսվում է աջակցել տարեցների նախաձեռնություններին՝ իրենց նախասիրություններին համապատասխան, օրինակ՝ ասեղնագործության կամ կարուճակի խմբակների միջոցով: Կշարունակվի բժշկասոցիալական և հոգեբանական սպասարկման կազմակերպումը, շուրջօրյա խնամքը էապես բարելավելով դրա որակը:

Տուն-ինտերնատի աշխատակազմի անդամների առնվազն 70 տոկոսի հետ կվերակնքվեն աշխատանքային պայմանագրերը:

Համագործակցության շրջանակներում կիրականացվի առնվազն 163 միլիոն դրամի ներդրում՝ մատուցվող ծառայությունների որակի և կացության պայմանների բարելավման ուղղությամբ:

Միայն 2020թ. ՀԿԻՆԸ-ն իրականացնելու է առնվազն 87 միլիոն ՀՀ դրամի ներդրում՝ 6 բնակելի հատվածներից 4-ի վերանորոգման համար:

Բնակելի 4 հատվածներից մեկը՝ նախատեսված առնվազն 20 խնամվողի համար՝ կկահավորվի և կհամապատասխանեցվի անկողնային խնամքի կարիք ունեցող անձանց մասնագիտացված խնամքի համար: Տուն-ինտերնատում խնամվողների ընդհանուր թիվը 160 է:

**ARMENIAN RED CROSS SOCIETY WILL UNDERTAKE THE MANAGEMENT OF GYUMRI NURSING HOME**

According to the memorandum signed with the Ministry of Labor and Social Affairs on December 19, the Armenian Red Cross Society will undertake 24-hour care provided to the elderly and persons with disabilities by the Gyumri nursing home.

We will invest the International Red Cross Red Crescent Movement experience, particularly the experience and skills gained thanks to the cooperation with Swiss Red Cross, which will allow us to improve living conditions of the elderly and people with disabilities in need of care.

Among others building conditions will be improved, an active aging component will be introduced, and links will be established with ten community-based initiative groups in the Shirak Region, which will promote socialization and community life.

In addition, we plan to support older people's initiatives according to their interests, such as embroidery or tailoring.

We will continue to provide medical, social and psychological care, 24-hour care, substantially improving its quality.

Employment contracts will be re-signed with at least 70 percent of home staff members.

The National Society will invest at least 163 million AMD to improve the quality and living conditions of the services provided.

Only in 2020 ARCS will invest at least 87 million AMD to renovate 4 of the 6 residential areas.

One of the 4 residential areas designed for at least 20 beneficiaries will be furnished and matched for special care of bed-ridden people.

The total number of beneficiaries in the nursing home is 160.



**ԿԱՄԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐԸ՝ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԽԱԶԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Դեկտեմբերի 17-ին, ժպիտներով, բարձր տրամադրությամբ, ջերմ ու տրամադրող միջավայր էր Ռեդիսոն Բլու հյուրանոցի սրահում, որովհետև այստեղ էին հավաքվել Հայկական Կարմիր խաչի ընկերության ավելի քան 100 ամենաակադիվ կամավորները: Նշում էին Կամավորների միջազգային օրը, որն ամբողջ աշխարհում տոնվում է դեկտեմբերի 5-ին: Այդ օրն ամփոփվեցին տարվա աշխատանքները, լավագույնները պարգևատրեցին կամ խրախուսական մրցանակներ ստացան:

**INTERNATIONAL DAY OF VOLUNTEERS CELEBRATED IN ARCS**

On December 17, there was a warm and welcoming atmosphere at the Radisson Blu Hotel, as more than 100 volunteers gathered there to mark the International Volunteer Day, which is celebrated on December 5 in all over the world.

This is a day of summing up the work done during the year, awarding the best ones, and celebrating the power of humanity once again.



**ՎԱՐԺԱՆՔՆԵՐ՝ ԱՂԵՏՆԵՐԻՆ ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ ԹԻՄԵՐԻ ՀԱՄԱՐ**

Եվրամիությամբ ֆինանսավորմամբ «Պատրաստ լինել արձագանքելուն» ծրագրի շրջանակներում Հայկական Կարմիր խաչի ընկերության՝ Վայոց ձորի, Գեղարքունիքի, Տավուշի և Սյունիքի մարզերի և Երևանի Աղետներին արձագանքման թիմերի համար ամռանը կազմակերպվել էին ուսումնավարժանքներ՝ արտակարգ իրավիճակներում արագ և ճիշտ արձագանքման հմտությունները բարելավելու նպատակով:

Վարժանքներին մասնակցեցին նաև ինքնակառավարման մարմինների և մարզային փրկարարական ծառայության ներկայացուցիչներ, ոստիկաններ, կամավորներ, որոնք հանդես եկան տուժածների դերում: Վարժանքների կազմակերպմանն աջակցել է նաև ԿԻՄԿ-ն:



**SIMULATION EXERCISES FOR DISASTER RESPONSE TEAMS**

In the frames of the “Ready to Respond” programme funded by European Union, Simulation drills have been organized during the summer, to improve ARCS Vayots dzor, Gegharkunik, Tavush, Syunik Regions and Yerevan Disaster Response Teams skills of quick response in emergency situations.

Local authorities, Rescue Service representatives, policemen and volunteers participated in simulations as well. The ICRC supported the organization of the simulations as well.



**ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԽԱԶԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԿՕԳՆԻ ՍԻՐԻԱՑԻ ՓԱԽՍԱԿԱՆՆԵՐԻՆ**

Դեկտեմբերի 7-ին Հայկական Կարմիր խաչի ընկերության գլխավոր քարտուղար Աննա Եղիազարյանը և Քուվեյթի Կարմիր մահիկի ընկերության նախագահ Հիլալ ալ-Սայերը ժնևում՝ Շվեյցարիայում, ստորագրեցին «Հայաստանում սիրիացի փախստականների աջակցության» ծրագրի պայմանագիրը:

Ծրագիրը, որի մեկնարկը տրվել էր 2019 թվականի նոյեմբերի 1-ից, շարունակվելու է մինչև 2020 թվականի հոկտեմբերի 31-ը: Նպատակն է բարելավել Հայաստանում սիրիացի փախստականների բարեկեցությունը՝ ապահովելով մարդասիրական աջակցություն և կրթության հասանելիություն՝ առավել խոցելի ընտանիքներին:

Ծրագրի շրջանակներում 60 առավել խոցելի ընտանիքներ տարեկան 4 անգամ կստանան սննդի փաթեթներ, 170 առավել խոցելի ընտանիքներ տարեկան 2 անգամ կստանան հագուստի ձեռքբերման վաուչեր, 30 առավել խոցելի ընտանիքների՝ անհետաձգելի առողջապահական ծառայության կարիք ունեցող անդամներին կտրամադրվի անհրաժեշտ գումար, առավել խոցելի ընտանիքների 40 ուսանողների կտրամադրվի ուսման վճարի մասնակի փոխհատուցում:

Աջակցության ընդհանուր գումարը կկազմի 100 000 դոլար:

**ԿԱՌՈՒՑԵՆՔ ԱՆՎՏԱՆԳ ԵՎ ԿԱՅՈՒՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ**

2019 թվականին Լոռու մարզի Մարգահովիտ համայնքում խմելու ջրի մատակարարման համակարգի արդիականացման, մասնավորապես՝ ջրավազանի վերանորոգման և խողովակաշարի փոփոխման համար Հայկական Կարմիր խաչի ընկերության կողմից տրամադրվեց 2212 մ խողովակ և շինանյութ: «Կառուցենք անվտանգ և կայուն համայնքներ» ծրագրի շրջանակներում Երևան, Վանաձոր և Ստեփանավան քաղաքներում, ինչպես նաև Լոռու մարզի 7 գյուղական համայնքներում (Մարգահովիտ, Մեծ Պարնի, Օձուն, Կուրթան, Կողես, Սարչապետ, Դարպաս), իրականացվել են համայնքների դիմայունության բարձրացման աշխատանքներ:



**ARMENIAN RED CROSS SOCIETY WILL ASSIST SYRIAN REFUGEES**

On 7 December, Dr. Anna Yeghiazaryan, Armenian Red Cross Society Secretary General and Dr. Hilal Al-Sayer, Kuwait Red Crescent Society President, signed the agreement of “Syrian Refugee support in Armenia” project.

The project started on 1 November, 2019 and will continue until 31 October, 2020. The objective of the project is improving the social well-being of Syrian Refugees in Armenia, by providing humanitarian assistance and access to education.

In the frames of the project:

- 60 the most vulnerable families will receive food parcels quarterly,
- 170 the most vulnerable families will receive cash vouchers for winter cloths two times during the year,
- 30 the most vulnerable beneficiaries will receive grants for expensive medical interventions
- 40 students from vulnerable families will receive educational partly fees.

The overall amount of the support will be USD 100 000.

**BUILDING SAFE AND RESILIENT COMMUNITIES**

In 2019, in Margahovit community of Lori Region, Armenian Red Cross Society provided with 2212 m of pipes and construction materials, to upgrade the water supply system.

In the frames of “Building Safe and Resilient Communities” project, micro-projects to raise community resilience have been implemented in Yerevan, Vanadzor and Stepanavan cities, as well as in seven rural communities of Lori Region (Margahovit, Mets Parni, Odzun, Kurtan, Koghges, Sarchapet, Darpas).



**ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ ԵՆՔ ՄՈՒԲԻԼԻԶԱՑՆԵԼ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Հուլիս – դեկտեմբեր ամիսների ընթացքում վեց մարզերում կամավորներն իրականացրեցին ֆոնդահայթայթման միջոցառումներ, որտեղ հավաքված գումարը ներդրվեց մարզում իրականացվող մարդասիրական գործունեության մեջ:

Հոկտեմբերի 18-ին Շիրակի մարզային մասնաճյուղի կամավորները, Աղքատության հաղթահարման միջազգային օրվա առթիվ, Գյումրի քաղաքում իրականացրեցին «Ասենք ըջ աղքատությանը» հանրային միջոցառումը: Անցորդները, լուսանկարվելով հատուկ ֆոտո շրջանակով, իրենց կոչն էին ուղղում թեմայի վերաբերյալ, և իհարկե, հանգանակություն կատարում՝ իրենց նպաստն ունենալով աղքատության հաղթահարմանը Շիրակի մարզում:

Հունիս-դեկտեմբեր ժամանակահատվածում կամավորների կողմից իրականացրած ֆոնդահայթայթման միջոցառումներից հավաքվեց 238 840 դրամ, իսկ հանգանակության տուփերից՝ 1 550 570 դրամ:

Ամանորին ընդառաջ Բերդում, Դիլիջանում, Կապանում և Մասիսում հանգանակության տուփերից հավաքված գումարով սննդօգնություն տրամադրվեց միայնակ անապահով տարեցներին: Իսկ Երևանում տեղադրված հանգանակության տուփերի գումարով ծնեռային տաք պարագաներ տրամադրեցինք Երևանի հանրակացարանաբնակ անապահով տարեցներին՝ մի փոքր ջերմացնելով նրանց առօրյան:

**ՍԻՐԻԱՀԱՅԵՐԻ ԻՆՏԵԳՐՈՒՄԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է**



«Սիրիահայերի և տեղացիների դիմակայունության բարձրացում» ծրագրի շրջանակներում հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին 62 սիրիահայերի կենտրոնի մասնագետներն ուղեկցեցին «Արենա բոուլինգ և բիլիարդ ակումբ» գվարճանքի կենտրոն, Երևանի պետական կամերային թատրոն, Մոսկվա կինոթատրոն, զբոսանքների ու էքսկուրսիաների:



**STRENGTHENING REOURSE MOBILIZATION EFFORTS**

During July - December, volunteers in six regions carried out fundraising activities, and the collected money were invested in humanitarian activities in the regions.

On October 18, the volunteers of the Shirak regional branch organized a public event “Let’s Say No to Poverty” in Gyumri on the occasion of the International Day for Overcoming Poverty. The passersby, taking a special photo frame, made their appeal on the topic, and of course, donated to contribute to overcoming poverty in Shirak.

From June to December 238 840 AMD have been collected during the volunteer fundraising events and 1 550 570 AMD from donation boxes.

On New Year’s Eve in Berd, Dilijan, Kapan and Masis, donated food was provided to lonely needy elderly. And with the money from donation boxes installed in Yerevan, we provided winter warm cloths to the needy elderly living in a dormitory in Yerevan, making them feel surrounded with warmth.

**SUPPORTING INTEGRATION OF SYRIAN ARMENIANS**



Within the framework of the “Resistance to Syrian Armenians and Locals” program, 62 Syrian Armenians in October and November accompanied by the psychologists visited the Arena Bowling and Billiards Club Entertainment Center, Yerevan State Chamber Theater, Moscow Cinema, went for walks and excursions.



**ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԹԻՄԵՐԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԱՕ ՄՐՑՈՒՅԹ ՏԱՎՈՒՇՈՒՄ**

Օգոստոսի 30-ին Տավուշի մարզի սահմանամերձ ութ համայնքների կամավորական թիմերն Իջևանում ցուցադրեցին իրենց հմտությունները՝ տարածաշրջանային մրցումների ժամանակ: Յուրաքանչյուր կայանում թիմերին հետևում ու նրանց գործողությունները գնահատում էին Հայկական Կարմիր խաչի ընկերության առաջին օգնության հրահանգիչները, որոնք մինչ այդ դասընթացներ էին անցկացրել Բարեկամավան, Դովեղ, Վաղանիս, Ոսկեպար, Սևքար, Բերքաբեր, Ներքին Ծաղկավան, Վազաշեն համայնքների բնակիչների համար:

Մրցումներում առաջին տեղը զբաղեցրեց Վազաշենի թիմը, երկրորդ տեղը՝ Դովեղի, երրորդ տեղը՝ Բարեկամավանի թիմը:

Մասնակիցները և կամավորները ստացան նվերներ: Մրցանակներ ստացան նաև լավագույն Առաջին օգնողները և Լավագույն ավագները:

**ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԹԻՄԸ՝ ՍԻԼՔ ՆՈՒ ՓԱՌԱՏՈՆՈՒՄ**

Հայկական Կարմիր խաչի ընկերության 61 կամավորներ և Առաջին օգնության հրահանգիչներ նոյեմբերի 6-ին, 8-ին և 10-ին 30 ժամ հերթապահեցին Կ.Դեմիրճյանի անվ. մարզահամերգային համալիրում՝ Silk Note Festival-ի ամբողջ ընթացքում: Հայկական Կարմիր խաչի ընկերության Առաջին օգնության տաղավարում հատուկ պատրաստվածություն անցած թիմն ու կամավորները, կարիքի դեպքում առաջին օգնություն ցուցաբերեցին քաղաքացիներին:

ՀԿԻՆԸ կամավորները շրջեցին նաև համալիրի տարածքում՝ անհրաժեշտության դեպքում առաջին օգնություն ցուցաբերելու համար, հերթապահություն կսահմանեն բոլոր մուտքերի մոտ՝ ուղղորդելու այցելուների հոսքը:



**VOLUNTEER TEAMS REGIONAL FA COMPETITION IN TAVUSH**

On August 30, 2019, volunteer teams from eight bordering communities of Tavush region demonstrated their skills of first aid in Ijevan during regional competition. The activities of all teams were examined and assessed at every station by the Armenian Red Cross Society instructors, who had previously conducted training sessions for people living in Barekamavan, Dovegh, Vaghanis, Voskepar, Sevqar, Berqaber, Nerkin Tsaghkavan, Vazashen communities.

The winner of the competition became Vazashen team, the second place took the team from Dovegh, and the third place – Barekamavan.

The participants and volunteers received gifts, the Best First-Aiders and Best Leaders were also awarded.

**FIRST AID SERVICE AT SILK NOTE FESTIVAL**

61 volunteers of the Armenian Red Cross Society and First Aid Instructors were on duty on November 6, 8 and 10 for 30 hours, throughout the Silk Note Festival, at the Sport and Concert Complex after K. Demirchyan.

Specially trained team and volunteers provided first aid to the citizens when needed in the First Aid Point of the Armenian Red Cross Society.

The ARCS volunteers were also walking around the complex to provide first aid if needed, setting a duty at all entrances to guide the flow of visitors.